ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ
«ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ» ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

0082, ք. Երևան, Ծովակալ Իսակովի 9, հեռախոս 52-27-63, 56-12-51, ֆաքս 54-67-90

«20» 09 2012թ. № 17/11 - 10307
Ձեր – 181-ի 1, 12.09.2012թ.
Մտից թիվ – 20112, 19.09.2012թ.

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ իրավաբան

պարոն Գ.Հայրապետյանին

ՀՀ ոստիկանության պետին հասցեագրված տեղեկատվություն ստանալու հարցումը Ճանապարհային ոստիկանությունում քննարկվել է:

Հայտնում եմ, որ վարորդական վկայական ստանալու գործնական քննության արդյունքները գնահատվում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի սեպտեմբերի 18-ի «Վարորդական վկայական ստանալու համար քննություններ ընդունելու և վարորդական վկայական տալու կարգը, վարորդական վկայական ստանալու համար պարտադիր ներկայացնելու ենթակա փաստաթղթերի ցանկը, ինչպես նաև ազգային ու միջազգային վարորդական վկայականների ձևերն ու նկարագրերը սահմանելու մասին» N 1158-Ն որոշման N 1 հավելվածի 41-ից 44-րդ կետերով սահմանված կարգով՝ նույն հավելվածի Ձև N 1-ով նախատեսված գործնական քննության արդյունքների վերաբերյալ արձանագրության մեջ նշված գործողությունների կատարման արդյունքում:

Պետ, ոստիկանության գնդապետ *Ա.Գալստյան*